

## Ն եր ա ծ ու թ յ ու ն

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվում են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2004թ. հունվարի 27-ի թիվ 01-Ն որոշմամբ հաստատված «2004 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ» նախատեսված ճյուղային (զերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող պետական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկագրերի և այլն), հաշվարկների և ՀՀ ԱՎԾ կողմից դրանց ամփոփման, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ կողմից մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում (ժողովածուներ, տեղեկագրեր, մամլո-հաղորդագրություններ, վիճակագրական զեկույցներ) ամփոփված նյութերի հիման վրա:

1999թ. ապրիլից սկսած, զեկույցների բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» հատվածներին համապատասխան:

Ամսական զեկույցները ներկայացվում են հակիրճ, եռամսյակայիններն՝ առավել մանրամասն, իսկ տարեկանները՝ ընդլայնված ու ընդհանրական:

Եռամսյակային զեկույցներում ընդգրկվում է «Մեթոդաբանական պարզաբանումներ» հավելվածը, որում հակիրճ ներկայացվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բնութագրերը, հաշվարկման մեթոդաբանությունը:

Զեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկությունները զետեղվում են ՀՀ ԱՎԾ <http://www.armstat.am> ինտերնետային էջում:

ԱՄՀ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ին (որին 2003թ. նոյեմբերի 7-ից անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը) համապատասխան՝ *ԱՄՀ ստանդարտների տարածման տեղեկագրում* <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> առկա է Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունը անգլերեն լեզվով, իսկ նույն ստանդարտի ՀՀ ԱՎԾ կողմից վարվող *Ազգային ամփոփ տվյալների էջում* <http://docs.armstat.am/nsdp/> առկա են երկրի համապատասխան տվյալները:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների օրինակները պահպանվում են ՀՀ ԱՎԾ գրադարանում:

*«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների հատվածներում առկա նախնական կամ հաշվարկային ցուցանիշները հաջորդ հրապարակումներում կարող են ենթարկվել ճշգրտման, պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածը հնարավորություն չի ընձեռում սկզբնական տեղեկատվության արժանահավատությունն առավել խորությամբ ստուգելու, ինչի իրականացումը «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի (գ) կետի դրույթներին համապատասխան, պահանջում է լրացուցիչ ժամանակ:*

### Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
տվյալներ չկան	...
չնչին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	x
տվյալները ճշգրտված են	◇

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ: